



ԱՅ ԲՆԱԴԱՐՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

2018 թվականի գործունեության տարեկան
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ք. Ստեփանակերտ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական

ռեսուրսների նախարարության կողմից 2018 թվականին կատարած աշխատանքների

ԲՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Բնապահպանության և բնօգտագործման ոլորտում 2018 թվականին իրականացվող քաղաքականությունն ուղղված էր շրջակա միջավայրի՝ մթնոլորտի, ջրերի, հողերի, ընդերքի, կենդանական ու բուսական աշխարհի վրա վնասակար ներգործությունների կանխարգելմանը կամ նվազեցմանը, բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործմանն ու վերականգնմանը, ինչպես նաև ԱԶ Նախագահի 2018 թվականի գործունեության ծրագրով նախատեսված բնապահպանության ոլորտի գծով գերակա խնդիրների և միջոցառումների կատարման ապահովմանը:

Բնապահպանության և բնօգտագործման բնագավառում առկա խնդիրների լուծման և բնագավառի պետական կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով իրականացվել են համապատասխան միջոցառումներ ուղղված՝

- ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի արդիականացմանը և կատարելագործմանը,
- Էկոլոգիական տեղեկատվական քաղաքականության ձևավորմանը ու իրականացմանը, բնապահպանական կրթության և դաստիարակության որակի բարելավման, հասարակության Էկոլոգիական գիտակցության ու մտածելակերպի կայացման և Էկոլոգիական խնդիրների մասին իրազեկության մակարդակի բարձրացման համար նախադրյալների ստեղծմանը,
- ընդերքի պահպանման, հաշվառման և գրանցման, դրա վերաբերյալ ճշգրիտ տեղեկատվության տրամադրման ապահովմանը,
- տնտեսական ծրագրերի գծով շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական համակարգի ձևավորմանը,
- տեսչական վերահսկողական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը
- բնության և շրջակա միջավայրի պահպանման նկատմամբ վերահսկողության առավել բարձր չափանիշների սահմանմանը,
- բնական ռեսուրսների օգտագործման նկատմամբ վերահսկողության ուժեղացմանը,
- անտառային կենսաբազմազանության պահպանությանը և կայուն օգտագործման անհրաժեշտությամբ պայմանավորված անտառային Էկոհամակարգերի բնապահպանական միջոցառումների իրականացմանը:

Բնական աճի աջակցման, բնական աճի ուսումնասիրության, անտառային ճանապարհների կառուցապատման ու վերանորոգման և բնափայտի մթերման տարեկան չափաքանակի ապահովման ուղղությամբ աշխատանքներ են իրականացվել անտառների պահպանության, պաշտպանության, վերարտադրման և անտառօգտագործման նպատակով:

ԱԶ կառավարության որոշմամբ 2018 թվականի համար հաստատված 7 380 խտացված մ3 գործափայտի և 80 000 խտացված մ3 վառելափայտի մթերման համար անտառօգտագործողներին տրամադրված թույլտվությունների հիման վրա <<Արցախաստառ>> ՊՈԱԿ-ի և անտառօգտագործողների միջև կնքվել են բնափայտի մթերման պայմանագրեր:

Հաշվետու ժամանակահատվածում մթերվել է 6 854 խտացված խորանարդ մետր գործափայտ և 75 014 խտացված խորանարդ մետր վառելափայտ, թափուկից՝ 21 161,5 դարսված խորանարդ մետր վառելափայտ:

Կենդանական աշխարհի պահպանության և կառավարման բնագավառում 2018 թվականին որսի օբյեկտ հանդիսացող որոշ կենդանատեսակների որսաշրջանում որսորդներին և ձկնորսներին տրամադրվել են 311 թույլտվություն, այդ թվում՝ 307 սիրողական որսի, իսկ 4-ը՝ ձկնորսություն իրականացնելու համար, մասնավորապես

1831 հատ թռչուններ և 480 կգ ձուկ որսալու համար: Տրամադրված թույլտվությունների դիմաց պետքի ունի Է մուտքագրվել 333 200 ՀՀ դրամ:

2018 թվականին ուսումնասիրվել են ներկայացված հանքարդյունահանման և երկրաբանական ուսումնասիրության թույլտվություններ ստանալու հայտերը, տեղում ուսումնասիրվել է ընդերքի 24 տեղամաս, որի արդյունքում տրամադրվել է 17 հանքարդյունահանման թույլտվություններ, իսկ երկրաբանական ուսումնասիրության համար տրամադրվել է 7 թույլտվություն: 2018 թվականի ընթացքում երկարաձգվել են 5 հանքարդյունահանման թույլտվության գործունեության ժամկետներ, վերաձևակերպվել են՝ 9 ընդերքօգտագործման իրավունք:

«Պետական տուրքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի համաձայն ընդերքօգտագործման դիմաց 2018 թվականին Արցախի Հանրապետության բյուջե է մուտքագրվել 39 415 190 ՀՀ դրամ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության բնագավառում բնապահպանական փորձաքննության ու ուսումնասիրության են ներկայացվել 115 ծրագրեր, որոնցից 68-ին տրվել է դրական փորձաքննական եզրակացություն, 30 հայտ, որոնք Արցախի Հանրապետության օրենսդրությամբ ենթակա չէին բնապահպանական փորձաքննության, նույնպես բավարարվել է, 17 դիմումներ հետ են վերադարձվել՝ լրամշակման նպատակով:

Բնապահպանական փորձաքննության իրականացման դիմաց պետական բյուջե է մուտքագրվել 7 982 000 ՀՀ դրամ:

Ստեփանակերտի քաղաքապետարանի, ԱՀ շրջվարչակազմերի, գյուղական համայնքների, տարբեր կազմակերպությունների ու քաղաքացիների կողմից ծառահատում և ծառերի երիտասարդացում իրականացնելու նպատակով ներկայացված 74 դիմումների հիման վրա, տեղում կատարելով ուսումնասիրություն, տրամադրվել է 52 թույլտվություն՝ պետական անտառային ֆոնդի մեջ չմտնող ծառերի հատման համար, 22 դիմում մերժվել է՝ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանելու պատճառով:

Պետական ընդերքաբանական փորձաքննություն իրականացնելու նպատակով տնտեսվարող սուբյեկտների կողմից ներկայացված դիմումների հիման վրա իրականացվել է ոչ մետաղական օգտակար հանածոների պաշարների հաստատման 18 ընդերքաբանական փորձաքննություն:

ԱՀ ջրային ռեսուրսների կառավարման բնագավառում 29 հայտերի հիման վրա տեղում ուսումնասիրվել է 27 ջրառի օբյեկտ, և համապատասխան քննարկման արդյունքում տրամադրվել 25 ջրօգտագործման թույլտվություններ, 4 հայտ՝ ուսումնասիրման պոլում են: Օրենսդրության պահանջների համաձայն երկարաձգվել են 12 ջրօգտագործման թույլտվության ժամկետներ: «Պետական տուրքի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի համաձայն պետքի ունի Է մուտքագրվել 241 000 ՀՀ դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում հանրապետության տարածքում բնապահպանական և ընդերքի պետական տեսչության կողմից կատարվել են 28 ստուգայցեր՝ ըստ «Բնապահպանական վերահսկողության մասին» ԼՀՀ օրենքի պահանջներին:

Բնապահպանական և ընդերքի պետական տեսչության կողմից իրականացված ստուգումների և ստուգայցերի ընթացքում հայտնաբերվել ու օրենսդրությամբ սահմանված կարգով ընթացքավորվել է 134 տարբեր տեսակի իրավախախտումներ, որոնց գծով բնությանը հասցված վնասի չափը կազմել է 44 474 300 ՀՀ դրամ, որից վճարվել է պետական բյուջե 9 545 147 ՀՀ դրամ, իսկ վարչական տուգանքը՝ 2 200 000 ՀՀ դրամ, որից վճարվել է պետական բյուջե 2 126 252 ՀՀ դրամ:

Բնօգտագործման (ներառյալ ռոյալթի) և բնապահպանական վճարների դիմաց 2018 թվականին պետական բյուջե է մուտքագրվել 5 283 257 517 ՀՀ դրամ:

- «Արցախի Հանրապետության տարածքի մակերևութային ջրերի մոնիթորինգ» ծրագրի շրջանակներում իրականացվել է մակերևութային ջրերի որակի ուսումնասիրություններ հանրապետության տարածքի մեծ ու փոքր գետերի և վեց ջրամբարների ջրհավաք ավազաններում և հարակից տարածքներում, ինչի հիման վրա

Նախնական գնահատվել է մակերևութային ջրերի Էկոլոգիական վիճակը: Ծրագրի իրականացման համար Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեով հատկացված 16 100 000 (տասնվեց միլիոն մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ գումարից փաստացի ծախսվել է 12 025 895 (տասներկու միլիոն քսանհինգ հազար ութ հարյուր ինսուսնհինգ) ՀՀ դրամ,

- «Արցախի Հանրապետության տարածքի կոշտ կենցաղային թափոնների ուսումնասիրության միջոցառումներ» ծրագրի շրջանակներում ուսումնասիրություններ է իրականացվել Ստեփանակերտ քաղաքի հարակից տարածքներում, Ասկերանի, Շուշիի և Մարտունու շրջանների տարածքներում ու գույքագրվել շուրջ 255 չարտոնագրված աղբավայր: Ծրագրի իրականացման համար Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեով նախատեսված 1 520 000 (մեկ միլիոն հինգ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ գումարից փաստացի ծախսվել է 724 200 (յոթ հարյուր քսանչորս հազար երկու հրյուր) ՀՀ դրամ,

- «Արցախի Հանրապետության տարածքում կենսատեխնիկական միջոցառումներ» ծրագրի շրջանակներում որոշակի աշխատանքներ է իրականացվել «Կաչաղակաբերդ» ազգային պարկի տարածքում՝ ձմեռային շրջանում կենդանիների կայուն կերի բազա ապահովելու նպատակով: Ծրագրի իրականացման համար ծախսվել է Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեով հատկացված 1 380 000 (մեկ միլիոն երեք հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ,

- «Արցախի Հանրապետության ընդերքի ուսումնասիրության միջոցառումներ» ծրագրի շրջանակներում իրականացվել է՝

1) Մարտակերտի շրջանում պղնձի երկրաբանաորոնողական աշխատանքներ.

2) Արցախի Հանրապետության տարածքում կամերալ և վերահսկիչ ստուգողական աշխատանքներ.

3) Ասկերանի շրջանում շինարարության համար պիտանի ավազային ռետուրսների գնահատում.

4) Արցախի Հանրապետության տարածքում մարմարի հանքավայրերի որոնում և հետախուզում:

Ծրագրի իրականացման համար ծախսվել է Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեով նախատեսված 120 000 000 (մեկ հարյուր քսան միլիոն) ՀՀ դրամ:

